



Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմը, իր գործող երկու՝ Առաջնորդանիստ Սուրբ Գեորգ եւ Սուրբ Էջմիածին եկեղեցիներով, հավուր պատշաճի իր մասնակցությունը բերեց 40-օրյա մանուկ Քրիստոսին Աստծուն նվիրելու առթիվ Տեառնընդառաջի տաղավարի տոնակատարությանը: Փետրվարի 13-ի երեկոյան կատարվեց նախատոնակի արարողություն, որի ժամանակ հայտարարվեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, փետրվարի 14 -ը հայտարարվել է նորապսակների եւ ընտանիքների օրհնության օր: Օրհնվեցին նորապսակ զույգերը, քարոզելով նրանց ստեղծել կայուն եւ ամուր ընտանիքներ, քանզի դա անհրաժեշտ է նախ իրենց եւ հետո՝ ազգին: Փետրվարի 14

ին

–
Թբիլիսիի
եկեղեցիներում
տոնի
առիթով
մատուցվեց
Սուրբ
եւ
Ամնահ
Պատարագ

:

Այնուհետև Սուրբ Էջմիածին եկեղեցու բակի մերձակայքում վառվեց ավանդական Տեառնը
նդառաջի
խարույկը

,
որպես
Քրիստոսին
խորհրդանշող
լույս
ել
նորապսակ
զույգերին
բաժանվեցին
նվերներ
: